

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2010 թվականի N 596-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՊՈԶԻՏԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ ԲԱՑԵԼՈՒԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 50-րդ, 77-րդ, 85-րդ, 86-րդ, 87-րդ, 92-րդ, 110-րդ, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, 22-րդ, 24-րդ հոդվածների պահանջների կատարումն ապահովելու, քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների անձնական հաշիվներում պահվող աշխատավարձերի, կենսաթոշակների և անձնական գումարների անկանխիկ շրջանառությունը կազմակերպելու նպատակով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**։

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին իրենց սպասարկող՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի ստորաբաժանումներում բացել դեպոզիտային հաշիվներ։

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետին համապատասխան բացված գանձապետական հաշիվներում կուտակվող միջոցները տնօրինվում են առանց նախահաշիվների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշմանը համապատասխան։

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներն սպասարկող գանձապետարանի ստորաբաժանումներում արտաբյուջետային հաշիվների վրա կուտակված գումարների մնացորդների փոխանցումը նոր բացված դեպոզիտային հաշիվների վրա՝ բացառությամբ միջազգային և դոնոր կազմակերպությունների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից հատկացվող ֆինանսական աջակցության գումարների։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2010 թ. մայիսի 24  
Երևան